



ԱՐԺՈՒՒ ՂԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԻ, ՀԱՐՔԵՆԴԻՄԻ ԹԻՒՐ
ՏԵՐՈՒՄԻՆԻ ԱՆՎԱՏԱՆԵՆ Ս ԼԵՂԵՅ

ԽՐԱԸԳԻՐ ՀԱՅՐԵՆԱԿՈՍ
ՄԱՐՏԻՉ ՎԱՐԻԱԳԵՏ ԽՐԵՄԵԱՆ

1862 — 1863

ՇԼՏԱՆԵ ՀԻՂԻՔԻՄԻ

ԹԻՒ 5

ԻՏՊԱՐԱՆԻ ՎԵՐԱԳՈՒՐԱԿԱՆ ԱՐԺՈՒՄՆ
Ի ՎԱՐԱԳ



THE UNIVERSITY OF
CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

1891 - 1892

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

հայերէն նման կտեսնամք, յորոց զոմանս վասն սիրոյ իբրեւ զորդի ժամանակ մը տանջեր է որ խրատուին, զոմանս առաքինութեանց փոխարէն վաճատրեր եւ փառաւորներ է, զոմանս չարագործութեանց աղաղաւ պատժեր է, ոմանց եւս իւր անհուն ողորմութեամբն նոցին արժանաւորութեանց համեմատ զթացեր եւ մխիթարեր է: Բայց սոյն հատուցմանց եւ եղելութեանց մէջ ի՞նչ սքանչելի զարմանալի եւ զգալի անբաւ հրաշքներ կան որ մարդս նոցա սկիզբն մէջն եւ վախճանն քննած ժամանակն կապշի ու կհիանայ: Երանի է այն անձին եւ այն ազգին՝ որ այս ամենը տեսնալով եւ մանաւանդ իւր անձին վերայ ալ զգալով, բոլոր կենացը մէջ իւր ամեն գործքերն ըստ սուրբ կամաց նորին կատարելու կկափաքի, եւ զանոնք բոլորովին իւր նսխատեսութեանը եւ տնօրէնութեանը յանձնելով ըստ այնմ կվարուի, յիշելով Սողոմոնի այն առակը թէ, (Մարդոյ է դնել ինչ ի մտի եւ ի տեսանէ լինի նմա պատասխանի):

Ո՞ր զգայուն հայ մը երբոր ասոնց ամէն տեսակներն ալ իւր ազգային պատմութեանը մէջ քննած ու տեսած ատենը երբեմն տրտմութեան եւ երբեմն ուրախութեան կիրքերով չպաշարուիր ու սիրտն փղձկեւել իւր արտասուքն կրնայ զսպել. եւ ո՞ր քարասիրտն անգամ իւր ազգին այն ամէն տառապանքներէն ետեւ՝ դարձեալ երկնային այցելութեամբ սփոփուիլ եւ մխիթարուիլն տեսած ատենը իւր սիրտն չկակուղնար, որով հետեւաբար նորա ոգւոյն վերայ աստուածային երկիւղն թագաւորելով, անձնասիրութիւնք շահախնդրութիւնք եւ ամէն տեսակ չար կիրքերն բոլորովին իւրեան օտարոտի եւ զրուելի երեւնալով եւ անհետ լինելով իւր սիրտն միտքն կլու-

աւորուի ու կզգաստանայ եւ կլինի այր կատարեալ սիրելի Աստուծոյ եւ արժանապատիւ առաջի մարդկանց :

Եթէ հրաշալիք մը չէ՞ որ մոռացութեան մէջ թաղուած մեր անոք անօգնական խղճալի ազգն այսպիսի լուսաւորեալ դարուս մէջ յակամայից դէպ ի կողքանուամ հակամտած ժամանակը, յանկարծ ոչ թէ քանադործութեան այլ ազգասիրութեան հուրովն հրաբուխի նման սիրար կփռնկի, մէկէն ի մէկ կողքայ իւր անկանոն վիճակը եւ կարգ կանոն կգոչէ ու կպահանջէ, ուստի էր այս կարեւորութեան զգացման հղօր ազդեցութիւնը, ի մարդկանէ՞ քան լիցի, այլ տուրք մը բարիք մը՝ որ ի յերկնից ի շօրէն լուսոյ ինջաւ երկնային հրեշտակին միջոյս, այն հրեշտակը որն որ առաքեցաւ առ Պետրոս, եւ ամենայն զօրութեամբ իւր ձեռքն՝ ի վաղուց անտի տգիտութեան եւ թշուառութեան խաւարչտին բանտին մէջ քնացած թմրած լքեալ Հայոց ազգին կողք խրթեց ու զարթոյց, եւ ազգասիրութեան երկնային լոյսը ճառագայթելու ժամանակը, խղճալոյն աչքն սկսաւ խողտալ, եւ այս նոր հրաշալիքն տեսնալով ապշութեամբ նայած ատենը՝ իմացաւ որ ասիկայ թաքորական տիեզերահռչակ ընդան վրայի տեսած սքանչելի լոյսին նըմանութիւն չունի, եւ իւր ընկերներն այն տեղն չեն : Այս վայկենական մտածմանց մէջ ընկղմած ատենը, լուսոյ մէջ յանկարծ հրեշտակին շուտ սթափէ մի շուտրիւ խօսքը լսելուն պէս՝ մէկէն ի մէկ բռնութեանց եւ հարստահարութեանց կրկնակի շղթայքն մեծամեծ շառաչմամբ յիւր ձեռքերէն հրաշալի կերպով արձակուեցան, եւ զուարթուն դարձեալ կրկնեց իւրեան ըսելով, սա աշխատասիրութեան համբերութեան գօտիւ մէջքի պինդ կա-

պէ , արթնութեան խաղաղասիրութեան եւ խոհեմութեան
պապենական ճղճղած հողաթափներդ ալ հագիր , զի մի եր-
բէք հարցես զքարի զոտն քո , եւ սա ցեցոտած մաշած
ճարտարամտութեանդ վերարկուն ալ վերադառաւ որ տը-
գիտութեան գիշերային ցրտութենէն չդողաս ու չսա-
ռիս եւ եկ զկնի իմ : Սոյն տնորէնութենէն ետեւ ի միա-
սին ի փողոցէ ի փողոց մթութեան մէջ խորտաբորդ տե-
ղերն իշնալով ելլալով սկսեց քալել , բայց ի վերայ այսր ա-
մենայնի տակաւին սոյն ճշմարտութիւնն իրեն երազ կթո-
ւէր , ուրախութեան արտասուօք այսպէս քալելով բաւա-
կան յառաջ երթալէն ետեւ , քաղաքը ի թշնամեաց պաշ-
տպանող ինստիտուտական մարդասիրական արտօնութեանց
եւ գթութեանց երկաթի դուռներն Նախախնամու-
թեան յատուկ շնորհիւն հրաշալի կերպով երկուքին առ-
ջեւն ըստ ինքեան բացուեցան , եւ հրեշտակ զանի Սահ-
մանադրութեան ընդարձակ պողոտային մէջ առաջնոր-
դելով՝ կանոն եւ սահման տալով պատուիրեց որ յաջ եւ
յահեակ չխտտորի , եւ խրախուսեց վստահացուցանելով
որ սոյն ճամբան զինքն ուղղակի գիտութեան լուսաւո-
րութեան եւ երջանկութեան տաճարն պիտի հասցնէ , ու
ըսելով շուտ մը աներեւոյթ եղաւ :

Յետ այնորիկ սոյն ազատեալ անմեղին տարակոյտն
փարատելով , քաջապէս համոզուեցաւ եւ սիրտն հաստա-
տեցաւ որ , արդարեւ սոյն ամէն տեսածներն ճշմարտու-
թիւն եւ երկնային շնորք մ'էր եւ ոչ թէ երազ . որն որ
ազգին իբրեւ մոլութիւն դարձած օգիտութեան նախա-
պաշարմանց չարութեանց եւ թշնամութեանց չրովքե-
սին բռնութենէն զինքն ազատեց , եւ մանաւանդ
փրկեց հրէից՝ այսինքն բանիւ միայն քրիստոնեայ եմ ըս-

կարմրուկ զիմաց քնքուշ որդոյն իւր սիրուն :

Երբ արեգակն գեղածիծաղ 'ի Մասեաց ,
Հայոց երկրէն լոյս տարածեց մէջ հովտաց .
Փռնել մանուշակն Արարատեան 'ի դաշտին ,
Ճածանում էր մայր Երասխին քովիկը :

Սոխակն Թռաւ Թառաւ այն զով ջրին քով ,
Ուր գենէրբուկն իմանուշիկ փթթած էր .
ՃԸԼ ԸԸԼ արաց հայոց գարնան երգ կարգաց ,
Ինչ որ բնութիւնն իմ սոխակին էր ասաց :

Ի՞նչ ապշում ես ան իմ աչեր ի՞նչ-կ' տեսնաս ,
Մայրիկն աւեր իւր օրօրոցն եւ կերթայ .
Կերթայ իւր փոքր 'ի պարտիզակն գեղաղ'ւարձ ,
Իւր անուշիկ որդւոյն համար հիւսել նուագ :

Մէկ համբոյր էլ կարօտանօք ետ որդւոյն ,
Աչեր խփեց սիրուն որդին մտաւ քուն .
Մայրն օրօրան շատ օրօրեց իւր մանկան ,
Եւ սրտառուչ ասաց զայս երգ սիրական :

Քնէ քնէ , սիրուն որդեակ , քեզ ճատալ ,
Մայրդ մեռնի քաղցրիկ անուանդ , հայոց վարդ .
Օրօր ասեմ թող քուն առնի իմ որդին ,
Հայրենեաց գիրկ անուշ կարմրի իմ որդին :

Քնէ քնէ , սրտիս կտոր , յԱյրարատ ,
Քո հայրերու արեան տեղերն կարմրցած .
Աստ կենում են մինչեւ ցայսօր այն կաթիլք ,
Որ կաթեցան քո հարց ճակատէն շատ քրտինք :

Արշակունի քաջ Տրդատէս այս տեղն էր ,
Որոյ նման դեռ մինչեւ ցարգ ոչ ոք է :
Այս հայրենի օրօրանիս մէջ սնած ,
Այրաբատայ ան . . . հայոց գիրկն են մեծցած :

Օրօր ասեմ իմ անուշիկ գառնուկին ,
 Հայոց արեւ քեզ օրերս տայ , շատ ապրիս .
 Օրերս կուգան դուն ալ կ' լինիս մէկ նոր Հայ ,
 Հայոց տարւոյն քեզ շատ բաժին կայ պատրաստ .
 Քնէ քնէ , դու արշալոյս իմ սիրուն ,
 Մօրդ սրտին ուրախութեան տուր ողջոյն .

Օրօր ասեմ իմ նոր բողբոջ նոր վարդին ,
 Որ քնանայ գիրկ հայրենի յօր'րանին :
 Քնէ քնէ , իմ մէկ հատիկ դու բերկրանք ,
 Ուրախութիւն իմ կենաց լոյս եւ պարծանք .
 Թող մայրդ բերկրի քո արեւով երբ մեծնաս ,
 Լեր հօրդ փոխան ինչպէս Դաւիթ քաջ երդեաց :

Օրօր ասեմ սիրուն որդւոյս տխրելով ,
 Քո հին հայրերն մատղաշ մաքիդ յուշ տալով .
 Որոնք մեռան անիրաւաց չար սրէն ,
 Յոր Հայաստան տապալեցաւ իւր հիմէն :

Քնէ քնէ սիրուն որդեակ քաղցրիկ քուն ,
 Նուիրական լեր դու որդի հայերուն .
 Դու Հայ ծնար երանի քեզ , հայ որդի ,
 Երանական լինիս ժառանգ հայ ազգի :

Օրօր ասեմ մատղաշ որդոյս ցաւակտոր ,
 Ելեր նայէ Երասխ գետին չորս բոլոր .
 Արեան առուակք ո՛հ , ման կառնուն կարմրակ ,
 Զոր Շահաբաս Թափեց սրովն իւր անյադ :

Զինչ օրիորդք պարկեշտուհիք տարաւ այն ,
 Որք Թէ մնային քեզ պէս մանկանց էին մայր .
 Անմեղ որդիս , քեզ չեմ յիշեր շատ աղէտ ,
 Դու նինջ արա որ քեզ լինի շատ աղէկ :

Անցան այն սեւ չար տարիներ'ն դժնդակ ,

Ահ, դու քնէ, սիրասնունդ իմ որդեակ :

Բաղդէն զքեզ ծնաւ ուրախութեան նոր որդի,
Ռւրախ քնէ ուրախութեանէ տարի .

Երբ արթննաս, յիմ ստեանց կաթ քեզ կուտամ,

Անուշ ուտես երկար ապրիս, դառնուկ ճան :

Հրաշայ Ս . Սեւիկեանց

Լշակերտ Ժ . Ս . Ս արագայ

ՏԵՍՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

Բ Ա Ղ Է Շ

Տուրուբերան նահանգին աամխօրէն Տարբերունի
կըսուի, որն որ մեծին Հայոց աասն եւ հինգ նահանգ-
ներէն մէկն է, որուն սահմանակից է արեւելեան կողմէն
Վասպուրական նահանգը . արեւմուտքէն Չորրորդ Հայք,
հիւսիսէն Բարձր Հայք եւ Արարատ . հարաւէն Աղձնեաց
եւ Մոկաց նահանգներն :

Բաղէշ քաղաքը սոյն Տուրուբերան նահանգին մայ-
րաքաղաքն է, որն որ այս նահանգին աասն եւ վեց գա-
ւառներէն մէկն եղող Բզնունեաց գաւառին մէջն է : Աս-
եւս սոյն գաւառին մէջն է Արծկէ խլաթ եւ Հիզան
քաղաքներն (1) :

(1) Ս արդան աշխատողին Արծկէ խլաթ Բաղէշ եւ Հիզան
քաղաքներն Բզնունեաց գաւառին մէջն կընէ : Ազգային աշ-
խատողներէն ոմանք ալ կըսեն թէ, Բաղէշ հին ժամանակ-
ներն Աղձնեաց նահանգին մէջ կհամարուէր, որուն մէջն է
Սալնոյ ձոր գաւառը . բայց մինչեւ ցայսօր տեղւոյն ազգայինքն
քաղաքին տեղն Սալնոյ ձոր կանուանեն :

Մոյն Բզնուհեաց գաւառին ինչ առիթով եւ սկզբ մամբ Բզնուհիք ըստւելուն վերայօք Խորենացւոյն պատմութենէն կիմանամք, որ մեր Հայկայ Մանաւազ որդւոյն ժառանգն եղող Բազ նահապետն վախայ ծովուն արեւմը տեան Հիւսիսային կողմի եզերքը իւրեան բնակութեան տեղ ընտրելով, իւր անունով թէ ծովն եւ թէ գաւառն Բզնուհիք կանուանէ։ (2) Ինչպէս որ կըսէ, « Յետ ուրոյ կեցեալ (Հայկայ) եւ այլ եւս ամս ոչ սակաւ՝ մեռանի, յանձն առնելով զբովանդակ ազնն Արմենակայ որդւոյ իւրոյ։ Իսկ նորա թողեալ երկուս յեղբարց իւրոց զիւրո եւ զՄանաւազ ամենայն աղխիւն իւրեանց ի կոչեցեալն Հարք, եւ զորդի Մանաւազայ զԲազ յորոց Մանաւազ ժառանգէ զՀարք, իսկ որդի նորա Բազ՝ յարեւմտից Հիւսիսոյ զեզլւ ծովուն աղւոյ, եւ զգաւառն եւ զծովն անուանէ իւրով անուամբն։ Եւ իսոյանէ ասեմ լիալ զնահապետութիւնս (նախարարութիւնս) մանաւազեան եւ զբզնուհեաց։ »

Բաղէշ Խլաթ Արծկէ եւ Հիզան քաղաքներն թէ եւ բազմաթիւ դարերէ ի վեր շինուած լինելն մեր յազգային պատմչաց յիշատակութեանց եւ նկարագրութեանց եւ նաեւ գաւառին ազգայնոց աւանդութիւններէն ալ յայտնի է, բայց չգիտցուիր թէ այս քաղաքներն Բազ նահապետը շիներ է, կամ թէ ո՛րն իւրն է եւ ո՛րն իւր յաջորդ նախարարներն կամ Թագաւորքն

(2) Նովուն Հիւսիսային արեւելեան կողմն իւր Բազ անուամբ շինած գիւղն մինչեւ ցայսօր կայ, որն որ 3891 տարուան գիւղ է, որուն մէջի Հայ բնակիչքն ժամանակաւ տեղւոյն քիւրդ բնակիչներէն Հարստահարուելով ուրիշ գիւղեր ցրուեր են, մինչեւ ցայսօր տեղւոյն քիւրդ բնակիչքն ալ գտնի Բազ կանուանեն։

շինած են . նաեւս հետեւաբար քաղաքաց անուն
ներն ինչ սկզբամաք եւ առիթով կամ թէ որ շինու
ղին անուամբն կոչուած լինելն յայտնի չէ , եւ շատե
րուն անուանց ստուգաբանութենէն ալ որոշ իմաստ մի
չելլար :

Բայց սա յայտնի բան մի է որ , քանի որ մարդիկ
բազմացեր են հետզհետէ երկրիս վերայ լեռանց դաշտաց
ձորերուն ու ծովուց եղերքներն ցրուելով ուր որ գա
ցեր են ամէնէն առաջ սկսեր են Աստուծոյ ճրիագէս
մարդուս պարգեւած հացի նման ամէնէն աւելի կարեւոր
եղող ջուրը փնտռել , եւ ուր տեղ որ գետեր աղբիւրներ
եւ առուներ եւ միանգամայն գոնէ ըստ բաւականին ըն
դարձակ բարեբեր դաշտեր եւ գուարձալի տեղեր՝ եւ
եղածին չափ գեղեցիկ օդ ունեցող երկիրներ գտեր են ,
ամենայն ուրախութեամբ եւ գոհութեամբ իւրեանց
բնակութիւնն այն տեղերն հաստատեր են :

Սոյն տեղերէն ոմանք առաջ գիւղ մի կամ թէ գիւղու
քաղաք մի ձեւացեր են եւ որ եւ իցէ կերպով անուն մը
դրած են , յորոց ոմանք յետոյ կամ փոխուեր են եւ կամ ա
ղաւաղուեր են , եւ այն գիւղերէն որոնք որ պատերազմելու
յարմար դիրքեր ունեցեր են մանաւանդ վաճառականութե
ան յարմար եղած տեղերն , այն տեղն բերդ մի կամ թէ
նորա բոլորովին պարիսպ մը կանգներ են , որոնք ի
թշնամեաց պաշտպանող ապաստանարան մի լինելով ,
հետզհետէ բնակիչքն շատցեր եւ հռչակաւոր քաղաքներ
եղեր են :

Յայտնի է թէ հարկաւ բնական է որ այս բերդերն եւ
պարիսպքն շինող իշխանք կամ ժողովուրդն նոցա վե
րայ ժամանակագլութեամբ հանդերձ արձանագրութիւն

գրեր են, բայց օտարազգիք նոցա տիրած ժամանակնին՝
 ոմանք աշխատակալութեան սիրով քաղաքն բոլորովին իւ-
 րեանց իշխանութեան տակն ինկած լինելն զգալի կերպով
 ցըցնելու նպատակաւ եւ փափաքով, եւ կամ թէ երբեմն
 ալ միանգամայն ի պատերազմական թշնամութեանց յա-
 ռաջ գալով եւ երբեմն ալ նոյն ստորագրութեանց յար-
 գը չգիտնալով ջնջեր են: Եւ ոմանք ալ քաղաքին վե-
 րայ ուր եւ իյե կերպով նորոգութիւն ընելով իւրեանց ա-
 նունը արձանագրեր եւ միանգամայն քաղաքին վերայ
 ալ իւրեանց անունը կամ ըստ գիպաց յալմար անուն մի
 դրեր են: Երբեմն ալ երկրին տիրող ազգն պատահական
 դիպուածով մի նոցա վերայ ուրիշ անուն մը դրեր է: Ինչ-
 պէս որ այս վերջի զուրջածներնուս յայտնի ապացոյց մ'է
 ետքի դարերուն ժամանակներն Հայաստանի այլ եւ այլ
 քաղաքաց ոմանց բուն ազգային անուանց փոխուիլն.
 զոր օրինակ հայերէն Տիգրանակերտ, Բաղէշ, Սեբաստիա
 եւ այլն քաղաքաց, յօտարազգաց կըսուի Տիարպե-
 քիւր, Պիլմիլիզ, Սըւազ: Բայց ժամանակ ժամանակ Հա-
 յաստանի տիրող թիւրք Պարսիկ Արապ Թաթար եւ այլն
 ազգերէն ո՛րը այս կամ այն քաղաքաց այս կամ այն անուն-
 ներն դրեր են, նոցա վերայ որոշ տեղեկութիւն մի չու-
 նիմք. սակայն ինչպէս որ ալ լինի սա խիստ յայտնի բան
 մի է որ՝ սոյն անուանց փոփոխութիւնքն՝ աշխարհակա-
 րութեան սիրով քաղաքաց բոլորովին իւրեանց իշխա-
 նութեանց տակը ինկած լինելն ցցուեւելու նպատակաւ,
 կամ թէ ի պատերազմական թշնամութեանց յառաջ ե-
 կած չէ, վասն զի եթէ այսպէս լինէր պէտք էր նոցա
 մօտ եղած միւս քաղաքաց անուանքն եւս (որ նոյն միջոց
 ներն՝ ինչպէս որ ի պատմութեանց կիմանամք մի եւ նոյն
 իշխաններն տիրեր էին.) փոխէին, որ ընդհակառակն

մինչեւ ցայսօր ամէն ազգ նոցա հայրական անուններն կը գործածեն, զոր օրինակ Վան, Մուշ, Արա, Հիզան, Խլաթ, Արծկէ եւ այլն :

Գրեթէ անհնարին է չկարծուիր որ դռնուի այնպէս քաղաք մի՝ որ զանի շինող իշխանին կամ ազգին յիշատակարանն եղած չլինի նոյն քաղաքին բերդին կամ պարսպին վերայ, բայց սա յայտնի բան մի է որ՝ շատ արձանագրութիւնք պատերազմաց ժամանակն կամ թէ ուրիշ ատեն անհոգութեամբ երեսի վերայ ձգուելով՝ գոյացած աւերակաց ներքեւն թաղուած ու անյայտ եղած են, որք պատմութեանց մեծ լոյս կրնային տալ : Յայտնի է որ այսպիսիք թէ աւերակ եւ թէ կանգուն քաղաքաց մէջ շատ կան : Այս մեր ըսածներն շատ քաղաքաց՝ նաեւս վերոյիշեալ քաղաքաց եւս կվերաբերին, մանաւանդ Բաղէշու՝ որուն վերայօք պիտի խօսիմք :

Բաղէշ բազմաթիւ ձորերով եւ դժուարամատոյց լեռներով պատած է, որուն արեւելքէն սահմանակից է Խլաթ եւ Դատուան, արեւմուտքէն՝ Մուշ, հիւսիսէն Մանազկերտ քաղաքը : Բաղէշ Վանայ ծովուն արեւմտեան կողմը կիլիկիայ, ուսկից հինգ ժամու չափ հեռաւորութիւն ունի :

Բաղէշ թէ ընդհանրապէս քաղցրահամ բազմաթիւ աղբիւրներ գետակներ, թէ խիստ առողջարար օդ ունենալուն, եւ թէ մանաւանդ վաճառականութեան յարմար տեղ լինելուն համար, քաղաք լինելու շատ արժանաւորութիւն ունեցած է, պակասութիւնն միայն սա է որ, յամէն կողմանց լեռանց մէջ լինելով ընդարձակ դաշտ մը չունի, որով քաղաքը աւելի փառաւոր զուարճալի եւ վայելուչ եղած պիտի լինէր :

Քաղաքին բոլոր շէնքերն երեք ձորի մէջ շինուած է,

Թէ արեւելեան Թէ հիւսիսային եւ Թէ արեւմտեան ձու-
րերուն մէջէն վազող մշտահոս վտակներուն երեքն ալ
դէպ ի հարաւային կողմի ձորին մէջ երթալով կմիանան
ու կըսուի Բաղիչո՝ ջուր . տճ՝ . Այլ Պիպլիս . որն որ Տիգ-
րիս գետը կ'Թափի : Սոյն վտակներն իւրեանց անցած
նշանաւոր տեղեաց անուններովն կըսուին Խոյէրո՝ ԿՏ
Խոսրովն՝ ջուր . բայց առիկայ Ամբօլ վայրին առջեւէն
անցնելուն համար քիւրտերն նորա անունովն Ամբօլ
ջուր կըսեն : Ավէիո՝ ջուր : Ահա ջուր . եւայլն : Սոյն իւ-
րաքանջիւր վտակաց խիստ քիչ մասերն քաղաքին ջա-
ղացքներն դարձնելու կգործածուին ու մեծ մասը պա-
րապը կերթայ , որք կրնան բազմաթիւ ահագին մեքենա-
ներ դարձնել : Այս վտակաց մէջն եւ դուրսի եզերք-
ներն բազմաթիւ աղբիւրներ կան : Տուներն սոյն երեք
ձորերուն մէջէն անցնող վտակաց եզերքներէն սկսելով
հետզհետէ դէպ ի վեր բարձրանալով կարգ կարգ լեռանց
զառ ի վայրին վերայ շինուած են , որոնք ըստ մեծի մա-
սին այլ եւ այլ գեղեցիկ բոյսերով ու ծառերով զարդար-
ուած պարտեզներ եւ տեղ տեղ ալ արտեր ունին : Թէ
տուներն եւ Թէ հասարակաց շէնքերն բոլորն ալ մէկ
ոտնաչափ քառակուսի կակուղ ընդհանրապէս մոխրագոյն
սրբատաշ եւ տեղ տեղ ալ գոյգգոյն քարերով շինուած
են , եւ տանիսներն ալ գերաններով ունոցա վերայ հո-
ղով ծածկուած են , որոց մէջ տեղ տեղ կամարակապ շին-
ուածներ եւս կան (1) : Սոյն ձորերուն մէջի վազող
վտակաց մէկ եզերքէն միւս եզերքն անցնելու համար՝

(1) Բնակիչքն սոյն ձորերուն քարտա տեղերն որ եւ իցէ շէնք
մի շինած առեւնին , մէկ կողմէն գետնին քարերը կկտրեն միւս
կողմէն կշարեն , որով երեք օդուտ կբաղեն , սյսինքն Թէ զառ

տեղ տեղ ի միմեանց մէյ մէկ քիչ հեռու քառակուսի սըր-
բատաշ քարերով միակամար բաղմամբիւ կամուրջներ շի-
նուած են : Քաղաքին տուններն սոյն վտակաց յերկու
ցունց կողմանց եզերաց սկսեալ մինչեւ լեռանց կողերն
տարածուած են :

ԲԵՐԴԻ ԲԱՆԻՇՈՅ

Բերդն երեք ձորին ճիշտ կեդրոնը հիւսիսէն դէպ ի
հարաւ երկնցած քարանձաւի մը վրայ շինուած է : Ա-
սորեւ միանգամայն քաղաքին որ ատեն շինուած լինելն
յազգային աշխարհագրաց եւ պատմաց որոշ տեղեկու-
թիւն մի չունիմք : Ասիկայ Հարաւային կողմը կամա-
րակապ աւերակ դուռ մը ունի , որոյ վերայ արաբերէն
մեծ գրերով արձանագրութիւն մը կայ , որ տաճկաց 902
թուականին այսինքն 378 տարի առաջ Սուլթաններէն
մեկուն շինած լինելն գրուած է , բայց ասիկայ միայն նո-
րողութիւն մի եղած պիտի լինի , ըստ որում բերդին ա-
րեւելեան վարի կողմը քառակուսի կակուղ քարերու
վերայ վեր ի վերոյ կերպով գրուած լատիներէն գրերով
հին արձանագրութիւն մը կայ . ասիկայ բերդին տակը
եւ նորա պատին կից շինուած խոհարարի մը խանութին
մէջն է , սակայն ամսոս որ թէ քարին եւ թէ հետեւա-
բար գրերուն շատ տեղերն մնշած եւ ավրուած լինե-
լուն պատճառաւ գրեթէ ըստ մեծի մասին անվերջանելի
եղած է : Ասկէց յայտնի է որ սոյն բերդն եւ հետեւա-

ի վայր տեղերն կշտկուին եւ թէ միանգամայն կընդարձակին
նաեւ ուրիշ տեղերէ քար բերելու փոխադրութեան ծախքն
ալ կաղատուին :

բար քաղաքն շատ հին ժամանակէ ի վեր շինուած է ,
 Բայց ինչպէս որ ալ լինի գոնէ տեղւոյս յառաքելաշէն
 վանքից յիշատակարանաց եւ յաւանդութեանց եւ թէ
 նոցա (ուխտատեղեաց) թուոյն առաւելութենէն (որոց
 վերայ իւրեանց տեղն պիտի խօսիմք ,) յայտնի է որ , 1863
 տարւոյ չափ առաջ եւ անկէջ ի բազում դարուց յետոյ
 սա ալ Հայաստանի ի ճոխ եւ բազմամարդ քաղաքաց
 մէկն եղած է . եւ ազգային իշխանութեան կործանման
 ժամանակներն՝ Հայաստանին միւս քաղաքաց պէս յիւր
 առաջին տեսակ ճոխութենէն հայկազանց բնակչաց
 բազմութենէն եւ երջանկութենէն զրկուելու է :

Քարանձաւին բոլոր կողմի երեսներն ալ խորտուբորդ
 է , ու վերէն ի վար ուղղահայեաց դիրք մը ունենալուն
 համար բերդէն մինչեւ վար դէպ ի դուռն շինուած ճաւ
 նապարհը շրջապատոյտ է , որոյ վերայ քարուկիր բարձր
 կամարով ծածկուած է : Գուռնէն սկսեալ մինչեւ բերդին
 բոլոր կողմերն բազմաթիւ աւերակներով լքեալ երեսի
 վերայ ձգուած է , միայն թէ տեղ տեղ քանի մը կիտա
 կործան այլ եւ այլ ձեւերով շէնքեր մնացեր են եւ քա
 նի մի տաճկի հին տուներ կան , որոնք փոքրիկ մզկիթ
 մ'ալ ունին : Սոյն բերդին մէջ աղբիւր չկայ , տուներէն
 ոմանք թէ եւ ջրամբարներ ունին , բայց խմելու համար
 բերդէն վար իջնալով յաղբիւրներէն ու վտակաց
 կուժերով ջուր կկրեն : Երեսուն տարւոյ չափ յառաջ սոյն
 քաղաքիս երկար ատեն տիրող Պարսից խաներուն ապա
 րանքն սոյն բերդին մէջն են եղեր , (այս իշխանութեան
 վերայ ետքէն պիտի խօսիմք ,) բայց հետզհետէ աւե
 րակ լինելով , այժմ նոցա հետքն ալ չէ մնացած : Քա
 րանցաւին բնական եռանկիւնաձեւ դրից վերայ քառա

կուսի փոքրիկ քարերով պատ քաշած են՝ որոց կարգին մէջ տեղ տեղ շէնքերու կամարներ կան, սորա շատ տեղերն փլած եւ մնացածներն ալ բոլորովին խարխլած են, այնպէս որ թեթեւ երկրաշարժ մի անգամ եղած առանձն շատ քարեր այն ահագին բարձրութենէն քաղաքին մէջ պիտի իյնան, որուն առջեւէն որ եւ իցէ ատեն անցներն ալ վտանգաւոր է, ինչպէս որ քաղաքին բնակիչք ըն կպատմէին, անցեալ ժարիններն քանի մի քար հարաւային կողմի պատէն վար ինկեր ու խեղճ բեռնակիր մի սպաններ է։ Դժբաղդաբար բերդին հարաւային մասնաւանդ արեւելեան կողմն ճիշտ յատակէն յառաւօտէ մինչեւ երեկոյ երթեւեկողքն անպակաս են։ Արդարեւ տեղւոյն կառավարութիւնն հասարակութեան մեծ բարերարութիւն եւ մարդասիրութիւն ըրած կ'ինքնեթէ սոյն ծանր եւ աղետալի վտանգին առջեւն առնելու համար պէտք եղած տնօրէնութիւնն ընէ։

Բերդին հիւսիսային ծայրէն տասն եւ մէկ ոտնաչափ հեռաւորութիւն ունեցող բլուրին վերայ քառակուսի աշտարակաձեւ քարուկիր շէնք մի կայ, որն որ բերդին բարձրութենէն քիչ մի ցած է. տեղւոյն ականատես ծերերն կըսեն թէ ասկէց 70 տարւոյ չափ առաջ սոյն շէնքին վերի ծայրէն բերդին գագաթէն քիչ մի վար կամար մի ձգուած լինելով, սորա վերայէն դէպ ի բերդը հաղորդուած խողովակներ շինուած են եղեր, եւ հիւսիսային կողմի լեռան աղբիւրին ջուրը ելեւք մասի բաժնուած լինելով, մէկ մասն բերդին մէջ, երկրորդն քաղաքին հիւսիսային կողմն եղած հայոց Արմրակ եկեղեցւոյն բակին, եւ երրորդն ալ նոյն խակ հիւսիսային կողմի լեռան միջաւայրին վերայ Ահօ—Մէյրան ըսուած

տեղին մզկիթին բակին մէջ կերթայ եղբւր . բայց այժմ
սոյն երեք տեղեաց ջուրին ճանապարհներն ալ խան-
դարուած ու աւրուած են , յիշեալ կամարն եւս փլած է ,
միայն թէ բերդին արեւմտեան կողմի պարսպին վերայ
խողովակաց մասունքներն տեղ տեղ կերեւան . սոցա շին-
ուածոց հետաքրքրութեան արժանի մասն այն է , որ ա-
ւելի դիմացկուն լինելու աղաղաւ հողէ թրծեալ խողո-
վակներն քարաշէն խողովակաց մէջ անցուցեր են :

Բերդին թէ արեւելեան եւ թէ արեւմտեան յատակի
կողմերն մէյմէկ խողոցներ կան , որ յայն տեղեաց մինչեւ
դէպ ի վեր բերդը հանող քարէ աստիճաններով ծածուկ
նեղ ճանապարհներ փորուած են , յայտեղերէն բերդին
բնակիչքն իջնալով սափորով դէպ ի վեր ջուր կկրեն :

Յայտնի է որ նախնի ժամանակներն թշնամիք քաղաքը
պաշարած ժամանակնին , բերդին մէջի ապաստանեալքն
եւ պատերազմողքն սոյն նեղ ճամբաներէն ջուր կկրեն ե-
ղբր , որ բերդին թէ յարեւելեան եւ թէ յարեւմտեան
կողմանց վազող վտակներն խիստ մօտէն անցնելով , բնու-
թեան այս մասին ընծայած զարմանալի յարմարութիւնն ալ
լրեանց մեծ դիւրութիւն տուած է : Աւելորդ է ըսելը
որ խաղաղութեան ժամանակներն բերդին բնակիչքն վա-
րէն վեր ջուր կրելու դժուարութենէն ազատ մնալու հա-
մար , ինչպէս որ վերն ըսինք բերդէն դուրս եղած վերո-
յիշեալ հիւսիւսային կողմի լեռան աղբիւրին ջուրը կա-
մարին վերայէն խողովակներով բերդին մէջ բերեր են .

բայց սա յայտնի բան է որ պատերազմին ժամանակն թըշ-
նամեաց բերդէն ներս մտնալու ճանապարհը խափանելու
համար , հարկաւ սոյն կամարը կքակեն եղբր : Բերդին մէկ
կողմէն զատ քաղաքին շէնքերն զանի շրջապատած են :

Արտուրի Թէ սորա մէջ գետնախոր ծածուկ ճանապարհ մը կայ, որն որ քաղաքին հարաւային կողմն եղած վտակին վերայի կամուրջներէն մէկն եղող Գացխենց ըսուած կա մուրջին քովն կհանէ եղեր, որ մէկ մղոնէն ավելի հեռաւորութիւն ունի, բայց սորա երկու կողմի դուռներն ալ հիմա չերեւար. յայտնիէ որ պատերազմաց ժամանակըն բերդին մէջի պաշարերոց ներք մտած ատեննին փախչելու համար շինուած է: Բերդն իւր բոլորտիքն եղող լեւանց բարձրութենէն աւելի ցած է: Սորա բոլորտիքն պտտելը կէս ժամ կտեւէ:

Աշարուակոտի:

Տեաւեալ գեղեցիկ երգը Բաղեշու Խնդրակատար Աստուածածնայ վանքին ձեռագիր մաշտոցին մէջէն օրինակեցինք, որուն վերջը գրուած էր: Ասիկայ 163 տարի առաջ Ռ. Զ. Խ. Ը. Թուին հայոց, 1699 ին Մուրատ անուն բանաստեղծին յօրինածն է, որն որ աղբառ եւ միանգամայն անծանօթ պանդուխտի մը ողորմելի եւ Թշուառ կեանքն ու սգալի մահն զուարճաբանութեամբ հանդերձ այնպիսի ճարտարութեամբ եւ աշխոյժ ոգով կնկարագրէ ու կպատկերացնէ, որ Լենկթխմուրի նման քարացեալ սիրտ ունեցող սիրտերն անգամ կձմրէ ու ի կարեկցութիւն կշարժէ:

Սոյն երգին ոչ Թէ միայն իմաստն, այլ եւ լեզուն ալ աւելի դիտողութեան արժանի է, որ այն ժամանակի Բաղիշեցոց աշխարհաբառն եղող կէս դրաբառ եւ խառնակ

Երբ հառաչէ, նա սիրտն ի փորձ առնու զալար .
 Յորժամ յիշէ զիւր սիրելին հաւասար ,
 Կա յաչերուն արիւն կաթէ յերեսն ի վայր :

Ղարիպի խելքն կորեր միտքն է մոլար ,
 Եւ թէ լինի քան զՊողոմոն մտօք ճարտար ,
 Որ թէ խօսի բան մի քանի անգին գոհար ,
 Սատեն նմա թէ ո՞րեւ կացիր անգէտ յիմար :

Ղարիպի ցորեկն եղուկ գիշերն է վայ ,
 Ըշերու քունն է հատեր ու ճար չկայ .
 Մտօք սանջի գիշերն ի բուն ոչ դուրանայ ,
 Ու աղիւն ես զինչ լինի գերիս երբ լուսանայր :

Ղարիպի վայն է եկեր երբ քաղցենայր ,
 Երեսն քարչ ի փողոցներն երթայր մուրայր .
 Շատ ոք փակեն զդուռն ի գիմաց նստեր ու լայր ,
 Թէ կաթ մի ջուր ուզէր գերին մէկ մի չտայր :

Ղարիպն խեղճ էր երբ յանկարծ հիւանդանայր ,
 Յօտար փողոց մոխրաթաւալ անկեալ կենայր .
 Թէպէտ ունէր շատ սիրելի մէկ մի չկայր ,
 Եւ նա անկեալ վեր երեսին դառն կուլայր :

Ղարիպն լայր եւ հառաչէր զինչ լինենամ ,
 Եւնձ գիտեն իմ սիրելիքն թէ ինչ հալի կամ .
 Ղարիպ եմ պանդուխտ դառն կուլամ ,
 Սէկ մի չունիմ ինձ սիրելի բարեկամ :

Ղարիպն անկեալ եւ թաւալէր ողորմագին ,
 Քանզի հասեալ էր օր մահուան ատենին .
 Ոչ բարձ գլխոյն կայր զարիպին ոչ անկողին ,
 Սալն սնարք էր եւ աւագն իւր անկողին :

ԽՈՐՀՐԻԱԾՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՑ ԱԶԳԱՅԻՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՑ

Ինչպէս որ տղայք իւրեանց խօսքին ու վարմունքին մէջ երբէք արուեստական կերպ մը չունենալով, իւրեանց հասակին յատուկ եղած առաքինի ոգիէն յառաջ եկած բնական եղանակաւ վարուելնուն համար աւելի սիրելի և ազնիւ կհանդիսանան, նմանապէս ալ այն բանաստեղծական գրուածոց մէջ աւելի սիրուն եւ ազնիւ ոգի մը կը փայլի, որոց հեղինակներն ոչ թէ արուեստական այլ բնական կերպով ինչպէս որ մտածեր են եւ իւրեանց առաքինի պարզ անկեղծ եռանդուն սրտին յաւելումէն ինչ որ բղխեր է այնպէս խօսեր կամ գրեր են, որով հետեւաբար բոլորովին արհամարհութենէ ազատ մնացած են: Եւ այսպիսի բնական բանաստեղծներէն ոմանց յատուկ եղած յատկութիւններէն մէկն ալ նոյն իսկ իւրեանց եւ իւրեանց երկրին սովորական եղած ուսմական լեզուան եւ ոճովն շարնդութն է, ինչպէս որ այս ձիրքերն մեր ազգային բանաստեղծից ուսմական լեզուաշինած երգոց շատերուն մէջ յայտնապէս կերեւան: Եւ մարդս այսպիսի պարզութեամբ եւ բնական եռանդին հետեւելով գրուած բանաստեղծութիւններէն այն աստիճան ճաշակ եւ զուարճութիւն կխմանայ ու կզմայլի, ինչպէս որ բնութեան զարդարած անտառաց ապառաժից վերայէն վազող վտակաց եւ դոյնզդոյն հոսաւէտ ծաղկանց տեսարաններէն աւելի քաղցր եւ ազդու կեր-

Թէեւ ընդհանուր չայոց, մանաւանդ Հայաստանի ազգայնոց տխրասէր բնաւորութեան վերայ ալ աւելի ետքի դարերուն տխրեցուցիչ աւերակներն եւ միանգամայն քաղաքական ողբալի թշուառութեանց ժամանակներն, իւրեանց վերայ աւելի մեծ տպաւորութիւններ ընելով, իւրեանց բանաստեղծութիւնքն ալ շատ ժամանակ նոցա համեմատ եւ նոցա վերայ յօրինած են:

Յիշաւի մեծ բարերազդութիւն մ'է ազգերնուս, որ սոյն դարուս մէջ քանի որ ուսումնականութիւնն սկսեր է ծաղկիլ, այնպիսի հատկութիւն գրուածոց յարգն հետզհետէ ճանչցուելով, բանասէրք սկսեր են զանոնք մէկ կողմանէ ժողովելով զոմանս օրագիրներու միջոցաւ եւ զոմանս առանձին հատորներով հրատարակել:

Թէ որ ազէկ մը քննելու լինիմք, կտեսնամք որ այս մասին քանի մի պատճառներով շատ մեծ կոթողներ ըրած եմք: մէյ մը որ, գիցուք թէ սոյն դարուս մէջ հարիւր տարի է ի վեր եկած գացած յիստուն բանաստեղծից հեղինակութեանց կտորներն յայտնուեր են, ո՞վ կըրնայ բացասել որ եթէ ուսումնականութիւնն այն ժամանակն եւ անկէց առաջ գոնէ հիմակուանին չափ ծաղկած լինէր եւ հետեւաբար նոցա յարգն ճանչցողներ ալ լինէր, անտարակոյս այսօրուան օրս գոնէ չորս դարերէ ի վեր յառաջ եկած ու գացած բանաստեղծից բազմաթիւ սքանչելի գրուածոց գանձերն ժողոված պիտի ունենալինք: Երկրորդ՝ նոցա շատերուն թէ գրով եւ թէ անգիր բանաստեղծութեանց յարգը գիտցող չլինելուն համար զանոնք գրող պահող մը չէ եղեր, ըստ որում հարկաւ ի նոցանէ ոմանք թէեւ բնութեամբ բանաստեղծական ոգի ունեցեր են, բայց գիր չեն գիտեր եւ

տեւաբար ասոր ձմեռուան ցուրտն սաստիկ՝ եւ լեռնոտ տեղերուն ալ ձիւնն շատ առատ է, վասն որոյ թէ քաղաքաց եւ թէ գիւղից բնակիչքն իւրեանց տանց տան եաց վերայ տեղ տեղ երկու եւ տեղ տեղ երեք մինչեւ անգամ չորս թղաչափ թանձրութեամբ հողով ծածկած են, որ ցուրտէն պաշտպանութիւն եւ միանգամայն ձիւնին ու անձրեւին ջուրը շէնքին մէջ չվազէ։ Վերեւայ թէ այս սովորութիւնը շատ հին եղած պիտի լինի, ինչ եւ իցէ մենք ամէնէն առաջ նոցին ինչ կերպով շինուած լինելուն վերայ դիտողութիւն մը քննէն ետեւ, զանոնք կդիմնորով ծածկելէն յառաջ եկած օգտից եւ դիւրութեանց վերայ պիտի խօսիմք։

Վանայ կարնոյ Բաղիշոյ Մշոյ քաղաքաց բնակիչքն իւրեանց տանց տանիքնեքուն վերայ որոնք որ տեսեր եմք, ի միմեանց մէկ ռոնաչափ հեռաւորութեամբ հասոր գլանաձեւ գերաններ ձգած են, եւ սոցա վրայէն ալ ոմանք կէս թղաչափ լայնութիւն ունեցող կանգնաչափ կտրուած սրբասաշ տախտակօք ծածկած եւ նոցա վերայ հող պարգած են, եւ ոմանք ալ սոյն տախտակաց փոխարէն մարդակօք այսինքն ծառերու հասոր ճիւղերով ծածկելէն ետեւ, հողին մասունքներն վար չթափելու համար նոցա վրայէն ալ յատկապէս շամբէ շինուած փոքրիկ խիւններ պարզելով, որն որ շատ գիւնացկուն է, երկու թղաչափ թանձրութեամբ կամ քիչ մ'ալ արեւի հողով անոնց վերայ ծածկած են։ Վանեցիք սովորաբար նորա վերայ ալ յարդախառն կաւով երկու կամ երեք տարին անգամ մը կծեփեն, որն որ անձրեւին եւ ձիւնին ջրոց դէմ բաւական կդիմանայ։ Բայց Բաղիշեցիք խճախառն հողն լեցընելէն ետեւ, տախտակ քանի մը օր շարունակ

կծեծեն ու միանգամայն մէկ կողմէն ալ երբեմն աղջուր
լեցնելով դարձեալ կծեծեն մինչեւ որ աղէկ մը ամրա-
նայ . այս կերպով շինուածն քանի մը տարի անձրե-
ւին ու ձիւնին ջրոց դէմ կ'ընկնայ : Այսինքն ցուրտն
վանէն Բաղէշէն եւ Մուշէն ալ աւելի սաստիկ լինելուն
համար , այն տեղի տանիքներուն շատերն կանգնաչափ
հողով ծածկուած են որն որ շատ վտանգաւոր բան է :

Այս ամէն կերպով շինուած տանիքներն դոյզն ինչ
շեղութիւն մը ունին : Ամէն ձիւն գալէն եւ կտրելէն
հետեւ , բնակիչքն ամիջապէս թիակի տեղ պաֆօթի ըսուած
մագաղաթեայ թեթեւ գործիքով կամ սորա փայտաշէն
տեսակովն ձիւնքն կտրեն , որ չլինի թէ հալելով
տանիքներն վնասէ եւ ծանրութեամբն ալ շէնքին
պատերն ճաթեցնէ , նաեւ արեգակն տաքութեամբն
ձիւնն կարծրանալէն առաջ կտրեն , որ ետքէն դժուա-
րութիւն մը չլինի : Տանիքն հաստը գերաններով ծած-
կելուն պատճառն ալ այն է , որուն վերայ կոխած ժա-
մանակին չլինի թէ գերաններն երեւան ու նոցա վե-
րայի կարծրացած հողն ճաթելով վնասուի :

Հայաստանի աղբայնոց շատերն թէ եւ իւրեանց տանց
տանեաց վերայ Լ . Պօլսոյ եւ ուրիշ քաղաքաց սովորու-
թեան պէս կղմինտրով ծածկելու թէ կարելիութիւնն եւ
թէ կարեւորութիւնն զգացեր են , բայց սոյն սովորու-
թիւնն ընդհանրացած լինելէն . յառաջ եկող պէտք ե-
ղած նիւթն պատրաստ չգտնալուն համար , հին դրու-
թեան համեմատ հողով ծածկելու ստիպուած են : Բայց կա-
րելի է ոմանք ալ սոյն հետեւեալ հինգ պատճառներն մէջ
բերելով անյաջողութեան կասկածներ ընեն ըսելով թէ ,

Առաջին . Մեր երկրին ձմեռն սաստիկ ցուրտ լինելուն

համար, կղմինտրն չդիմանար կճաթի ու կոշն չանայ:

Երկրորդ. Եթէ կղմինտրով ծածկելու լինիմք, հարկաւ ըստ սովորութեան միւս քաղաքաց, տանեաց գերանաց վերայ տախտակամած պիտի լինի, որոց միջոցներէն տան մէջ փչած սաստիկ ցրտութենէն ազատ չեմք կըլնար մնալ:

Երրորդ. Հայաստանին մէջ ընդհանրապէս անտառի նուազութիւն լինելուն պատճառաւ, կղմինտրին տակի տախտակամածն շատ թանկ կշինուի. հետեւաբար աղքատիկ Հայաստանցոց քսակին դիտուն այն ատեն աւելի մեծ ձիւն կուգայ, նոյն միջոցին նորա կղմինտրն ով պիտի շինէ եւ ձիւնը ով պիտի սրբէ:

Չորրորդ. Կղմինտր շինուելէն ետեւ անոր վերայ չեմք կրնար կոխել եւ ձիւնը սրբել, որն որ հետզհետէ կդիզուի ու պատերուն եւ նոցա հիմանց վերայ ծանրաբեռներով ճաթեցներով ու փլցուներով կվնասէ. եւ հետեւաբար շէնքն կործանման վտանգին ենթակայ կըլինի:

Հինգերորդ. Կենք կղմինտրի համար այնչափ ստակ չեմք կրնար տալ, որ առ այժմ մեզի համար մեծ շուշլութիւն մը կհամարուի:

Եւ ահաւասիկ մենք ալ կղմինտր գործածող քաղաքաց օրինակներն մէջ բերելով, եւ միանգամայն տոյն հինգ կտերաց վերայ խորհրդածելով եւ նոցա հետ բաղդատելով, մեր կարծիքն հասարակութեան կներկայացնեմք ամենուն օգուտ եւ դիւրութիւն մը ընծայեցուշանքով եւ դիտաւորութեամբ:

Առաջին. Կղմինտրն ցուրտէն ճաթելու կարծիքն սըխալ է. վասն զի յայտնի է ամենուն որ թէեւ

հողէ թրծեալ անօթից մէջ թէ որ ձմեռ ատեն ջուր կամ
 ձիւն լեցուի, հետեւաբար նոցա մէջ գոյացած սառն ըն-
 դարձակելով կճաթեցնէ. բայց կղմինտրն ագուգածեալ (1)
 լինելով, նորա մէջի սառն ընդարձակելու ատենը, ուրիշ
 անօթոյ նման շրջափակեալ նեղ սահմանի մը մէջ ամփոփ-
 ւած չլինելուն համար, հեռզհետէ դէպ ի դուրս կելլայ
 ու ճաթեցնէր: 11. Պօլսոյ մէջ երբեմն այնպէս սաստիկ
 ձմեռ եւ ցուրտ կլինի որ, տեղ տեղ ծովն անգամ կսա-
 ռի. եթէ տանեաց կղմինտրներն ճաթէին, հարկաւ բը-
 նակիչքն զանոնք բոլորն ալ նորոգէին պիտի եւ հետե-
 ւաբար ձմեռուան ցուրտն սաստկացած ժամանակն, կըղ-
 մինտր շինող գործաւորքն ամխալաճառաց պէս հանդի-
 սաւոր ուրախութեամբ մեծ խնջոյք մը կազմելով, ոչ թէ
 միայն խախտից ալ ամենայն շաշլուութեամբ անկիւրայի
 մեղրով շինուած քալալայ ալ պիտի ուտէին, վասն զի
 սոցա շահն աւելի արդիւնաւոր պիտի լինէր. որ ընդհա-
 կառակն այսպիսի բան մը պատահած չլինելուն համար,
 խզճալիներն մըջիւնի նման իւրեանց ամառուան աշխա-
 տախլութեան չափաւոր պտուղն ձմեռուան մէջ վայե-
 լիէն զատ ուրիշ աւելորդ յոյս մը չունին: Տփխիս որ
 Հայաստանին նայելով աւելի հիւսիսային ցուրտ դօտ-
 ւոյն տակը կլինայ, այսու ամենայնիւ այն տեղն ալ
 կղմինտր գործածելու սովորութիւնը մտած է:

Երկրորդ. Եթէ կղմինտրին տակի տախտակամածին
 վերայ կէս թզաչափ թանձրութեամբ յարդասխառն հողով
 ծեփելով՝ նորա վերայ կղմինտրներն հաստատուի, թէ
 ցուրտն ներս չազդերի եւ թէ տանը առաստաղն ալ մի-

(1) () Լուրք պիւլիմի:

անդամայն տախտակամածին մաքրութիւնն ու վայելչութիւնը կունենայ, ուսկից երբեք հողին մասունքներն ալ վար չեն թափիր, բայց տանեաց՝ հիմակուանէն քիչ մ'ալ աւելի շեղութիւն տալ հարկաւոր է: Ա. Պօլսոյ մէջ սաստիկ ցուրտ եղած ատենը քանի որ տեղւոյն դիւրակեաց բնակիչքն նոյն միջոցին տախտակամածից միջոցներէն փչած ցուրտին կդիմանան, ուրեմն ցրտութեան եւ գովելի չարքաշութեան մէջ կըթուած Հայաստանցիք, իւրեանց տուներն այս կերպով ի նոցանէ բազմապատիկ աւելի ցուրտէն պաշտպանուելուն համար շատ գոհ պէտք է լինին:

Երրորդ. կղմինտրին տակի տախտակամածին համար աւելի ծախք մը ընելու առիթ մը չկայ, ուստի անտառաց նուազութիւնը ասոր արդեւք մը չկրնար լինել, ըստ որում հիմակուան տանիքներուն վրայի գլանաձեւ մէկ գերանը երեքի տեղ կրնայ ծառայել սա կերպով, այսինքն գերան մը երեք մասի բաժնելով վերէն ի վար պէտք է սղոցով կտրել, որոց իւրաքանչիւրն եթէ ճարտարապետական կանգնոյ երկու մատնաչափ կամ քիչ մ'ալ աւելի հաստութիւն՝ հինգ կամ վեց մատնաչափ ալ լայնութիւն ունենան բաւական է. հետեւաբար յայտնի է որ եթէ հիմակուան կերպով շինուած տան մը տանիքին վերայ 30 գերան կայ նէ, ի նոցանէ տասը հատըն պիտի աւելնայ, յորոց սղոցով բարակ տախտակներ շինելով, կղմինտրին տակի շինուելիք տախտակամածին բաւականանալէն զատ կաւելնայ ալ. միայն թէ սղոցելու համար ոչ ինչ ծախք մը պիտի լինի, ուսկից յառաջ եկած օգտից վրայօք վարը պիտի խօսիմք:

Չորրորդ. Տանիքին վերայ կղմինտրով ծածկելէն եւ

տեւ, նորա վերայ ոչ թէ միայն կանգնաչափ ձիւն՝ որ
 չայստանին մէջ շատ քիչ տեղ կ'լինի, այլ երկու կանգ-
 նաչափ ալ դայ այնպիսի ցուրտ ժամանակներն մեծ
 տանջանօք ձիւն սրբելու հարկ մը չկայ. վասն զի վերու-
 յիշեալ թէ բարակ գերանաց տախտակամածին ու կէս
 թղաչափ թանձրութիւն ունեցող հողին ու կղմինտրին,
 եւ թէ երկու կանգնաչափ ձիւնին, սոցա ամենուն ծան-
 րութիւնն՝ այժմեան տանեաց վերայի եղած երկու երեք
 թղաչափ հողին մարդակաց եւ ահագին գլանածեւ գե-
 րանաց աւելորդ ծանրութեանց հետ բաղդատելու լի-
 նիմք, աւելի թեթեւ պիտի գտնամք. ըստ որում ձիւնն
 թէ եւ երկու կանգնաչափ ալ դիզուի, բնականաբար թե-
 թեւ լինելէն զատ՝ արեգական տաքութեամբն եւ հետզհե-
 տէ հալելով պակսելու վերայ է, հետեւաբար ըսել է որ
 սոյն ծանրութենէն շէնքին ոչ պատերն եւ ոչ նոցա հի-
 մունքն երբէք չպիտի վնասուի. ինչպէս որ ըսինք այս
 կերպով, հին դրութեամբ շինուածին վերայ յաւելում մը
 չլինելէն զատ անկէց ալ թեթեւ պիտի լինի: Անձրեւին
 եւ ձիւնին ջուրերն ալ շէնքին պատին վերայ վազելով
 զվնասելու համար, տանեաց բոլորտիքը թիթեղէ կամ թէ
 աւելի աժան լինելու համար փայտէ ագուգաներ շինե-
 լու է, եւ դիմացկուն լինելու համար նոցա մէջ ալ ձիւ-
 թով ձեւելու է: Ասեւ. երկրորդ հատուածին համեմատ
 կղմինտրներն տախտակամածին վերայի յարգախառն հո-
 ղածեփին մէջ հաստատուած լինելուն համար, կատու-
 ներն եւ կուզերն (1) զանի շէն կրնար խաղտել եւ վը-
 նասել, ինչպէս որ ասիկայ 1) . Պօլոյ տանեաց վերայ
 միշտ կ'աւտահի:

(1) Սամար:

Հինգերորդ . Երրորդ քաղաքի մը տանց տանիքներն
կղմինտրով ծածկելու սովորութիւնը ընդհանրանայ , հասկ
չէ ըսել որ հետեւաբար շատ վաճառուելուն համար
գինն ալ կաժաննայ : Թէ ասոր եւ թէ տախտակներն սը-
ղոցելու ծախքէն յառաջ եկած ապագայ օգուտներն ,
այսինքն շէնքին տարապայման կերպով երկարատեւ դի-
մացկուհութիւնն հին դրութեամբ շինուածներուն ետքէն
շարունակ եղած ծախուցը հետ հաշուելու լինիմբ ,
կտեսնամք որ ասիկայ անկէց աւելի շատ աժան կլինի :
Հայաստանի շէնքերն փայտաշէն չեն որ փթտին , այլ քա-
րաշէն եւ աղիւսաշէն լինելով , մի միայն տանեաց վե-
րայէն վազող անձրեւի եւ ձիւնի ջուրերէն զատ ուրիշ
զօրաւոր կերպով վնասող առիթ մը չունին : Ուրեմն սոյն
նոր դրութեամբ շինուածն , ամենայն կերպով աւելի մեծ
խնայութիւն մ'է քան թէ շուայլութիւն :

Մնացեալը յաջորդ Բոսով :

ԱՍՏՂԱԲԱՇԽ ՏՂԱՅԻ ՄԸ ԳՏԱԾ ՆՈՐ ՄՈՒՊՈՒԱԿԸ .

Հատախի կողմէն դիւղացի պարզամիտ տղայ մը , իւր-
եանց կողմն լուսնոյ ծնունդն տեսնալէն քանի մը օր ետքը
իւրեան հօրը հետ վան եկած ատենը , լուսնոյ լրումն եր-
րոր կտեսնայ կիրարծէ թէ միշտ միօրինակ այնպէս է , նո-
րա պայծառութեանն վերայ զարմանալով ակնթարթ կ'իտա-
յի եւ զմայլելով մը յանկարծ կըսէ , (Ես քե մեռնեմ
վանայ լրսին , ինչ խօթօտիկ լիւս մը կըտէր , մեր տեխ
մէկ կըճլեատիկմ' կէր թըճեա՛ր հընէ լիւս չկէր :) Այս-
ինքն ես քեզի մեռնիմ վանայ լուսին , ինչ գեղեցիկ լոյս
մը կուտաս , մեր կողմը կէս կտուր մը կար ընաւ . մէջը
լոյս չկար :

ԵՆՁՆԵՆՈՒՅՐ
ԳՈՐԾԵԼԷՅՐ ԲՆԵՔՈՒԹԵՆ

Մ. Է. Գ. Միլլերի և Տ. Լ. Կոմարովի:

Միւլտի-Եզնիկ յարդապետ Սեփաստացի Ի Սեբե Լիարա-
պետ :

ԿԼԵՄԵՆՏ ԷԶԵՅ ՍԱՐԳԻՍ ՍՐԴՊԵԱՆՆ Ս ԺԱՆԿԵՐ:

ՏՐԱՊԷՊՈՒՆ • Գ • Ստեփան Մ • Յակոբեանց •

Կ. ՊՈԼԻՍ. Գրավաճառ Պ. Յարութիւն Մարգարէան :

ՏՖԽՍՍ՝ Պ. Համբարձում Լճիֆեճեանց հրատարակիչ ԼԵ-
ռուհի Հայոց աշխարհի պատուական ամսագրոյն . եւ Պ.
Վարեդին Սուրառեանց .

ԳԼԵՁԼԿ · Գ · ՆՔՐԱՏՍ § · ՆՔՐԱԽՏԱՆԵՅ :

ԴԱՐԱՆՆԵՐ . ԸՆԹԵՐԿԱՍԻՐԱԳ ԹԱՆԳԱՐԱՆ :

ԼԼԵՒԱՆԴԻՄՈՒՆ՝ Տ. Յովսէփ քահանայ :

ՆՈՐ ՊԵՅԼՈՒՏ : Եղայ Բարսեղ Արծրունեանց :

ԵՐԵՒԱՆ. Գ. Համբարձումի թաղէտեան :

ՆԵԽՈՒՆԵՆ • Մ • ՄԿրտիչ ԹՅԱՆԷԱՆ :

ՈՒՆԻՄԱՆ ԼԳՈՒՄԻՍՏ. Գառապար Լալանեանց :

ՆԵՐՅԻՆ — Ուսումնասէր Տ. Յակոբ Բազանայ Տ.

Լ՛նդ թէ ասեանց :

ՌԵԴԱԿՏՈՐՆԵՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

၁၂) မာဇုကမဟုတ်ဘဲ ၊

ԱՄԵՐԻՍՏ • Էշա Պատալ Երզումանեան :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆՈՒԹՈՅ .

Հրաշալի փախուստ Պետրոսի 'ի բանտէն :	129
Օրօրան հայրենի :	133
Տեսարանք հայրենի աշխարհաց . Բաղէշ :	136
Խորհրդածութիւն 'ի վերայ ազգային բանաստեղծութեանց :	150
Թէ Հայաստանի շինուածոց տանիքներն ինչո՞ւ հողով ծածկուած են եւ թէ անոր տեղ կղմինար գործածուի ինչ օգուտներ կյառաջանան :	153
Աստղաբաշխ տղայի մը գտած նոր մոլորակը	160

ԴԻՆ՝ ՏԱՐԵՎԱՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՎԱՆԽԻՎ
 Ի ՎԱՆ , 'Ի ԲԱՆԷՂ , 'Ի ՄՈՂ , 'Ի ԱՄԵՆ , ԵՐԻՆ՝ - - - ԻՆ՝
 խաւն զո՞րո՞շնոց արծաթ Մէճիփէ :
 Ի՞նչ Կ . Պօլի՞ն է - Տաճկաստանի ո՞րէն խաղաղութիւն էրէ՞
 արծաթ խաւն զո՞րո՞շնոց Մէճիփէ :
 Ի Ռո՞սաստան է - Ի Պարսկաստան չորս արծաթ Մանէլ :
 Զանապարհէն ծախիւ խճափէրէ պիտի լծարէ :